ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

10.10.2017թ. | ժամը 17:00-18:40 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարար
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդական
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
	Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«Հասարակական ձայն» («ՍիվիլՎոյս») հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն

զարգացման կենտրոնի փորձագետ

ՀՀ կառավարության աշխատակազմ

Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
Դավիթ Շինդյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ

Հյուրեր՝

Արտաշես Դավթյան	Հայաստանում ՄԹ դեսպանություն
Նարինե Թադրոսյան	Համաշխարհային բանկի գրասենյակ Հայաստանում
Արման Պողոսյան	Պետական եկամուտների կոմիտե
Արման Մնացականյան	Պետական եկամուտների կոմիտե
Ջերեմի Ուիթ	միջազգային փորձագետ
Ալեն Ամիրխանյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի պատասխանատու հանքարդյունաբերության կետրոն (ՀԱՀ ՊՀԿ)
Մերի Գալստյան	ՀԱՀ ՊՀԿ
Հրաչյա Հովհաննիսյան	ՀԱՀ ՊՀԿ

Բացականեր՝

Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավաբանական դեպարտամենտի ղեկավար

Սոնա Այվազյան «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատանքային նիստը նվիրված էր ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացված ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) նախագծի վերաբերյալ մի շարք հարցերի քննարկմանը

Դ.Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց նիստի օրակարգը՝ նշելով, որ նիստի նպատակն է քննարկել ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի նախնական ուսումնասիրության նախագծի վերաբերյալ մի շարք հարցեր, կայացնել դրանց վերաբերյալ որոշումներ և արդյունքները ներկայացնել ՀԱՀ ՊՀԿ-ին՝ դրանք հավելյալ ուսումնասիրելու և ուսումնասիրության վերջնական տարբերակում արտացոլելու նպատակով: Նշվեց, որ ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցի նախնական ուսումնասիրության նախագիծը ներկայացվել է ուշացումով, և ԲՇԽ-ն պետք է աշխատի ավելի ինտենսիվ՝ ուսումնասիրության վերաբերյալ նկատառումները սեղմ ժամկետում խորհրդատուին տրամադրելու համար: ԲՇԽ-ի որոշ անդամներ և ՀՀ ԱՃԹՆ-ի պատասխանատուներըարդեն իսկ ներկայացրել են իրենց նկատառումները, որոնցից պարզ է դառնում որ ուսումնասիրության մեջ առկա են մի շարք բացթողումներ. խորությամբ չեն ուսումնասիրվել եկամտային հոսքերը և դրանց կշիռները, առաջարկությունների հիմավորումները առկա չեն, կան տեխնիկական բացթողումներ:

Տեղեկացվեց, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում արդեն ընտրվել են տեղական և միջազգային փորձագետները, միջազգային փորձագետ Ջերեմի Ուիթը Հայաստանում է և ներկա է նիստին: **Առաջարկվեց՝** կազմակերպել ԲՇԽ-ի անդամների հանդիպում փորձագետների հետ Հայաստանի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների հետ կապված հարցերը քննարկելու նպատակով:

Քննարկված հարցերը

1. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների հրատապությունը

Նշվեց, որ արդեն նոյեմբերի սկզբին պետք է մշակել և շրջանառել օրենսդրական փոփոխությունների նախագծերը, քանի որ օրենքների ընդունման համար բավական երկար ժամանակ է պահանջվում (մոտ 6 ամիս), և հարցը շատ հրատապ է:

2. Ըստ կազմակերպությունների հարկային և վճարների հոսքերի հրապարակումը ԱՃԹՆ-ի զեկույցում արդյո՞ք խնդրահարույց չէ հարկային գաղտնիքի բացահայտման տեսանկյունից և պահանջվում է արդյո՞ք օրենսդրական փոփոխություն:

Հայտարարվեց, որ գործող օրենսդրությամբ հարկերի և վճարների հրապարակումը ըստ ընկերությունների պարունակում է հարկային գաղտնիք, և սահմանվում է, որ հարկային մարմինները տեղեկատվությունը պահպանում, տրամադրում և օգտագործում են օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: Կարգավորումը վերաբերում է 1000 խոշոր հարկատուներին, որոնց կողմից վճարված հարկերը և վճարները հրապարակվում են ՊԵԿ-ի կայքում ըստ կազմակերպությունների: Հանքարդյունաբերական ընկերությունների մի մասը ներառված է 1000 խոշոր հարկատուների ցանկում, սակայն դա բավարար չէ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել կառավարության համապատասխան որոշման մեջ: **Որոշվեց**՝ կատարել լրացուցիչ ուսումնասիրություն և պարզել անհրաժեշտ իրավական ակտերն ու նախագծել անհրաժեշտ փոփոխությունները:

Բարձրացվեց նաև հարկային և մաքսային մարմիններում վաճառքի գնի վերաբերյալ տեղեկատվության առկայության հարցը, քանի որ ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է բացահայտել արտադրության և արտահանման ծավալներն ու արժեքները: Միջազգային փորձագետը նշեց, որ ստանդարտը պահանջում է բացահայտել ամեն հանքատեսակի գծով արտադրության և արտահանման ագրեգացված ցուցանիշները և ինչքան է փաստացի վճարվել դրանց համար: Խոսքը վերաբերում է հաշվետու տարվա ընթացքում կատարված փաստացի գործարքներին, այլ ոչ թե պայմանագրերին: Նշվեց, որ ԲՇԽ-ն կարող է որոշում կայացնել ներկայացնելու ապաագրեգացված մեծությունները՝ ըստ

ընկերությունների: Քննարկման արդյունքում **որոշվեց՝** օգտագործել միայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ներկայացրած տվյալները և զեկույցում ներկայացնել հաշվարկների մեթոդաբանությունը:

3. ԱՃԹՆ-ի հիմնավորումը ՀՀ օրենսդրության մեջ

Նշվեց, որ Հայաստանի ԱՃԹՆ-ի անդամակցությունը որևէ իրավական հիմնավորում չունի (պայմանագիր, համաձայնագիր), ուստի իրավական ակտերում հնարավոր չէ դրան հղում կատարել: Առաջարկվեց իրավական ակտերում օգտագործել «հանրային հաշվետվություն» հասկացությունը:

4. ՏԻՄ-երի հաշվետվություն ներկայացնելը

Ներկայացվեց, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը կարող է ՏԻՄ-երց հավաքագրել համապատասխան տվյալները և ներկայացնել անկախ ադմինիստրատորին: Քանի որ ԱՃԹՆ-ի ստանդարտով պահանջվում է, որ բոլոր մամինները հաշվետվություն ներկայացնեն ուղղակիորեն անկախ ադմինիստրատորին, **առաջարկվեց՝** այս, ինչպես նաև հաշվետվությունները ՀՀ կառավարության աշխատակազմի միջոցով անկախ ադմինիստրատորին ներկայացնելու հարցի կապակցությամբ ստանալ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կարծիքը: Հողի հարկի և գույքահարկի վճարումների, ՏԻՄ-ին և ֆիզիկական ու իրավաբանական անձանց վճարված վարձակալության վճարների ըստ ընկերությունների բացահայտմանը խոչընդոտող իրավական կարգավորումների բացահայտման համար **առաջարկվեց՝** հարցը քննարկել ՀՀ արդարադատության նախարարության մասնագետների հետ: Նշվեց, որ ԱՃԹՆ-ի ստանդարտով պարտադիր է, որ բացահայտվեն պայմանագրով սահմանված սոցիալական կորպորատիվ պատասխանատվության վճարները, իսկ կամավոր կերպով սոցիալական ծրագրերին ուղղված վճարումների բացահայտման վերաբերյալ ԲՇԽ-ն պետք է որոշում կայացնի:

5. Պայմանագրերի բացահայտումը

Հարց բարձրացվեց, թե արդյո՞ք պայմանագրերը և դրանց հավելվածները պարունակում են առևտրային գաղտնիք, կան իրավական արգելքներ դրանց հրապարակման համար: Ներկայացվեց, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում (12-րդ և 13-րդ հոդվածներ) սահմանվում է, որ

ընդերքօգտագործողների վերաբերյալ ընդերքօգտագործումից ստացված երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Այդ երկրաբանական տեղեկությունը սահմանվում է պայմանագրում: ՀԱՀ ՊՀԿ-ի ներկայացուցիները հայտնեցին, որ այս հարցի վերաբերյալ ուսումնասիրությունը դեռ ընթացքի մեջ է: Հայտարարվեց, որ նշված կարգավորումը վերաբերում է մինչև պաշարների հաստատումը երկրաբանական տեղեկությանը, իսկ պաշարների հաստատումից հետո այդ տեղեկությունն այլևս գաղտնիք չէ և հանրային լսումների փուլում տարբեր փաստաթղթերով բացահայտվում է: **Որոշվեց**, որ եթե ՀԱՀ ՊՀԿ-ի ուսումնասիրությունից ևս պարզվի, որ պայմանագրերում ներկայացված տեղեկությունը իր մեջ առևտրային գաղտնիք չի պարունակում և այլ իրավական խոչընդոտներ չկան, պայմագրերը կարող են բացահայտվել:

6. Հիմնադրամների հաշվետվություն ներկայացնելը

Հարց բարձրացվեց, թե արդյո՞ք հանքարդյունահանող կազմակերպությունների կողմից հիմնադրված (դրանց հետ կապված) հիմնադրամները պետք է ընդգրկվեն ԱՃԹՆ-ի զեկույցում և հաշվետվություններ ներկայացնեն: Նշվեց, որ հիմնադրամները ընդգրկելու պարագայում պետք է իրականացվեն օրենսդրական փոփոխություններ, որի համար պետք է տրվեն այդ հիմնադրամների ընտրության հստակ չափանիշները: Առաջարկվեց, որ բավարար է ընկերությունների կողմից հիմնադրամներին վճարված վճարումների բացահայտումը ընկերությունների կողմից: Նշվեց նաև, որ հիմադրամների տարեկան գործունեությունը ենթակա է պարտադիր աուդիտի, որի արդյունքները հրապարակվում են, որը բավարար է: **Որոշվեց,** որ ընկերությունները տեղեկատվություն ներկայացնեն՝ կամավորության սկզբունքով իրենց կողմից կատարած վճարումների մասին՝ ըստ հիմնադրամների, ըստ հասարակական կազմակերպությունների և ըստ ֆիզիկական անձանց, վերջինի դեպքում՝ ագրեգացված, ոչ անվանական կերպով: Անհրաժեշտ է իրականացվել լրացուցիչ ուսումնասիրություն հիմնադրամներին և հասարակական կազմակերպություններն կատարած վճարումների անվանական ներկայացման հնարավորության վերաբերյալ (իրավական արգելքների առկայության հարցը): Առաջարկվեց՝ ապագայում քննարկել հիմնադրամների հաշվետվողականության, հանքարդյունաբերությունից ստացած գումարի ծախսման ուղղությունների բացահայտման հարցը:

7. Այլ որոշումներ

Որոշվեց՝ հոկտեմբերի 17-ին, ժամը 18:00-ին անցկացնել աշխատանքային նիստ՝ շարունակելու քննարկումները:

Որոշվեց՝ որ նախնական ուսումնասիրության նախագծի վերաբերյալ ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի պատասխանատուների նկատառումները առաջիկա 2 օրվա ընթացքում կդրամադրվեն ՀԱՀ ՊՀԿ-ին:

Որոշվեց՝ հաջորդ նիստին քննարկել, թե որ կազմակերպությունները պետք է հաշվետվություն ներկայացնեն և հաշվետվություն ներկայացրածներից որոնք պետք է համադրվեն, կարևոր հետախուզական (ուսումնասիրության) աշխատանքների բացահայտելու հարցը, մետաղաձուլական կազմակերպությունները ԱՃԹՆ-ի զեկույցում ընդգրկելու և հաշվետվություններ ներկայացնելու, զեկույցում ֆինանսական տվյալները փաստացի վճարումների (cash) կամ հաշվարկային (accrual) մեթոդներով ներկայացնելու հարցերը: